

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13 փետրվարի 2014թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության առաջատար մասնագետ Արամ Սարգսյանը, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան/

2. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2013թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և առաջիկա խնդիրների մասին:

/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Թ. Ղազարյան/

3. Համայնքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և ՏԻՄ-երի կողմից դրամական պահանջների վերաբերյալ կայացված որոշումների հարկադիր կարգով կատարման հնարավորությունների մասին:

/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ.Կոզմանով/

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վարդանիձոր համայնքում 2013թ. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին:

/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձոր համայնքի ղեկավար Ա.Բեկլարյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ „Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, ղեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանը:

Օրակարգի երկրորդ՝ „ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2013թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և առաջիկա խնդիրների մասին, ղեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Թ. Ղազարյանը:

Օրակարգի երրորդ՝ «Համայնքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և ՏԻՄ-երի կողմից դրամական պահանջների վերաբերյալ կայացված որոշումների հարկադիր կարգով կատարման հնարավորությունների մասին ,զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ.Կոզմանովը:

Օրակարգի չորրորդ՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վարդանիձոր համայնքում 2013թ. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձոր համայնքի ղեկավար Ա.Բեկլարյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ հանդես եկան Քարաշենի գյուղական համայնքի ղեկավար Լ. Ավետյանը, Քաջարանի քաղաքային համայնքի ղեկավար Վ.Գևորգյանը :

Հայտարարություններով հանդես եկան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Թ. Ղազարյանը, քաղաքաշինության վարչության պետ Ա. Ուստաբաշյանը, իրավաբանական բաժնի պետ Կ.Կոզմանովը, ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ս. Ավետիսյանը:

Մարզի խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցադրումներին տրվեցին պարզաբանումներ զեկուցողների և մարզպետի կողմից:

Հանձնարարվեց աշխատակազմի՝

իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանովին

- պատրաստել շրջաբերական նամակ համայնքների ղեկավարներին՝ ՏԻՄ-երի կողմից դրամական պահանջների վերաբերյալ կայացված որոշումների հարկադիր կարգով կատարման հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով.

քաղաքաշինության վարչության պետ Ա. Ուստաբաշյանին

- ըստ անհրաժեշտության առանձին համայնքների հետ քննարկել համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի՝ „Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ –ի սպասարկմանը հանձնելու հետ կապված ծագած խնդիրները և առաջարկել համապատասխան լուծումներ:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան